ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«10» 01 2024 թ. Թիվ 9-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 145-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի սեպտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գործավարության կարգը, գործավարությունում օգտագործվող ձևաթղթերի և մատյանների ձևերը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի իրավական ակտերի նախագծերի մշակման, շրջանառման, իրավական ակտերի հաշվառման, իրազեկման կարգը և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կնիքների, դրոշմակնիքների շրջանառության կարգը հաստատելու մասին» թիվ 145-Լ հրամանի 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված N 4 հավելվածի Ձև N 1-ի (այսուհետ՝ Ձև N 1) 1-ին կետի 1-ին սյունակում լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.2-րդ ենթակետ.

«8.2) Կնիքը շրջանաձև է, տրամագիծը՝ 45 միլիմետր, կենտրոնում՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը, շրջանագծի երկայնքով՝ «ՀՀ ՔԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գրառումը՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով.»:

2. Ձև N 1-ի 1-ին կետի 1-ին սյունակում լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.3-րդ ենթակետ.

«12.3) Կնիքը շրջանաձև է, տրամագիծը՝ 40 միլիմետր, կենտրոնում՝ «ՓԱԹԵԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ» գրառումը, շրջանագծի երկայնքով՝ «ՀՀ ՔԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գրառումը.»:

3. Ձև N 1-ի 2-րդ կետի 1-ին սյունակում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.3-րդ ենթակետ.

«1.3) Դրոշմակնիքը ուղղանկյուն է, երկարությունը 56 միլիմետր, լայնությունը 24 միլիմետր, ուղղանկյան ներսում՝ «ՀՀ ՔԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գրառումը, հինգերորդ տողում՝ «ՄՏԻՑ N» գրառումը, գիծ, վեցերորդ տողում՝ «ԹԵՐԹԵՐԻ ԹԻՎԸ» գրառումը, գիծ, յոթերորդ տողում՝ ամիս-ամսաթիվը.»:

4. Ձև N 1-ի 2-րդ կետի 1-ին սյունակում լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.3-րդ ենթակետ.

«14.3) Դրոշմակնիքը ուղղանկյուն է, երկարությունը 56 միլիմետր, լայնությունը 24 միլիմետր, ուղղանկյան ներսում՝ «ՀՀ ՔԿ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գրառումը, հինգերորդ տողում՝ «ԵԼԻՑ N» գրառումը, գիծ, վեցերորդ տողում՝ «ԹԵՐԹԵՐԻ ԹԻՎԸ» գրառումը, գիծ, յոթերորդ տողում՝ ամիս-ամսաթիվը.»:

5. Ձև N 1-ի 2-րդ կետի 19-րդ ենթակետի 3-րդ սյունակում «տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության» բառերից հետո լրացնել «, պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության» բառերը:

6. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, գլխավոր քարտուղարին, առաջին բաժնի

պետին, հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ